ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

31 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 204-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՉՈՐԱՑԱԾ ԾԱՌԵՐԸ ՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Թույլատրել սանիտարական հատում իրականացնելու նպատակով հատել Վայք համայնքի Արտավան բնակավայրի տարածքում գտնվող թվով 6 (վեց) հատ չորացած ուռենին և թվով 4 (չորս) հատ չորացած բարդին:

2.Ստացված վառելափայտը հատկացնել Արցախից բռնի տեղահանված ընտանիքներին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

02 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 205-Ա

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԸ ՏՎՅԱԼ ՇԵՆՔԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 30-ի «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վրա կառուցված բազմաբնակարան շենքի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասը տվյալ շենքի բնակարանների և (կամ) ոչ բնակելի տարածքների սեփականատերերին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով անհատույց փոխանցման կարգի մասին» N 1855-Ն որոշումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի՝ (քաղաք Վայք) բազմաբնակարան շենքերի պահպանման և սպասարկման համար առանձնացված հողամասերը ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով անհատույց փոխանցել տվյալ շենքերի բնակարանների և (կամ) ոչ բնակելի տարածքների սեփականատերերին (այսուհետ՝ բազմաբնակարան շենքի սեփականատերեր):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված հողամասեր են համարվում՝

ա) կցակառույցներ չունեցող բազմաբնակարան շենքի համար՝ շենքի պարագծով ինչպես անմիջականորեն շենքի տակ գտնվող հողատարածքը, այնպես էլ սալվածքի

չափով հողաշերտը, եթե այն չի հանդիսանում ճանապարհ, փողոց կամ դրանց հարող հատված կամ այլ անձի սեփականություն հանդիսացող հողամաս.

բ) օրինական և ինքնակամ կցակառույցներ ունեցող բազմաբնակարան շենքի համար՝ ինչպես սույն որոշման 2-րդ կետի «ա» ենթակետում նշված հողատարածքը, այնպես էլ օրինական կցակառույցի պարագծով դրա տակ գտնվող հողատարածքը, եթե այն չի հանդիսանում այլ անձի սեփականություն:

3.Ընդունել ի գիտություն, որ
ա) Վայք համայնքի Վայք քաղաքի Ջերմուկի խճ. 11 շենքի պահպանման և սպասարկման համար առանձնացված հողամասը, որն ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով անհատույց փոխանցվում է շենքերի բնակարանների և (կամ) ոչ բնակելի տարածքների սեփականատերերին, կազմում է 0.1040 հա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից և տարածվում է 2006 թվականի նոյեմբերի 30-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

03 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 206-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՉՈՐԱՑԱԾ ՈՒՌԵՆԻՆ ՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Թույլատրել սանիտարական հատում իրականացնելու նպատակով հատել Վայք համայնքի վարչական սդահմաններում գտնվող, Մ 2 միջպետական ճանապարհի հարակից «Հարունի կամուրջ» կոչվող տարածքում գտնվող չորացած ուռենին (թվով մեկ հատ):

2.Ստացված վառելափայտը հատկացնել արցախյան 44-օրյա պատերազմում վիրավորում ստացած Արա Աբգարյանի անապահով ընտանիքին:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

06 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 207-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՅՔ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,21265 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաեվ անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիմքով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Վայք քաղաքում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 0,21265 հա բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը ճանաչել որպես առանձին միավոր, համայնքային սեփականություն և հասցեավորել՝ Վայք համայնք, Վայք քաղաք, Վ. Սարգսյան փ. 1/3 հողամաս:
2. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտե՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու համար:
3. Ֆինանսական բաժնին՝ կատարել համապատասխան վճարումներ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

07 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 208-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՁԱՌԻԹԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 101-րդ հոդվածով և հիմք ընդունելով սեփականատերերի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Դադարեցնել համասեփականատերեր Վալերիկ Նորայրի Բաբաջանյանին, Անյա Սաշայի Ստեփանյանին, Գրիգոր Վալերիկի Արշակյանին և Արման Վալերիկի Արշակյանին սեփականության իրավունքով պատկանող ծածկագիր՝ 10-022-0238-0026, 0.91 հա մակերեսով վարելահողի, ծածկագիր՝ 10-022-0263-0034, 0.05 հա մակերեսով վարելահողի և ծածկագիր՝ 10-022-0251-0015, 0.28 հա մակերեսով խոտհարքի սեփականության իրավունքը:
2.Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասերը ճանաչել որպես համայնքային սեփականություն:
3.Դիմել ՀՀ կադաստրի կոմիտե՝ սեփականության իրավունքի գրանցման վկայական ստանալու համար:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

08 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 209-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆՈՐ ԱԶՆԱԲԵՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.1 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Նոր Ազնաբերդ բնակավայրում գտնվող 0.1 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասը, հողատեսքը՝ արոտավայր, ճանաչել որպես առանձին միավոր, համայնքային սեփականություն և ներկայացնել իրավունքի պետական գրանցման. չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023CKMMA8:
2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

08 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 210-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆՈՐ ԱԶՆԱԲԵՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.1 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Նոր Ազնաբերդ բնակավայրում գտնվող 0.1 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասը, հողատեսքը՝ արոտավայր, ճանաչել որպես առանձին միավոր, համայնքային սեփականություն և ներկայացնել իրավունքի պետական գրանցման. չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023D3NDRB:
2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 077112894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

08 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 211-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՆՈՐ ԱԶՆԱԲԵՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.1 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վայք համայնքի սեփականություն հանդիսացող Նոր Ազնաբերդ բնակավայրում գտնվող 0.1 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասը, հողատեսքը՝ արոտավայր, ճանաչել որպես առանձին միավոր, համայնքային սեփականություն և ներկայացնել իրավունքի պետական գրանցման. չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023FXY8EU:
2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

14 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 212-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 12.09.2023Թ-Ի ԹԻՎ 179-Ա ԵՎ 180-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Վայք համայնքի ղեկավարի 12.09.2023 թվականի թիվ 179-Ա որոշման բովանդակության 1-ին կետում «ավելի բարձրարժեք հողատեսքի՝ այգի (խառը)» բառերի փոխարեն գրել «ավելի բարձրարժեք հողատեսքի՝ այգի (կորիզավոր)» բառերը, այնուհետև ինչպես տեքստում:
2. Վայք համայնքի ղեկավարի 12.09.2023 թվականի թիվ 180-Ա որոշման բովանդակության 1-ին կետում «ավելի բարձրարժեք հողատեսքի՝ այգի (խառը)» բառերի փոխարեն գրել «ավելի բարձրարժեք հողատեսքի՝ այգի (կորիզավոր)» բառերը, այնուհետև ինչպես տեքստում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel 098992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

14 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 213-Ա

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ 22 ՇԵՆՔԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԹՎՈՎ ԵՐԿՈՒ ԾԱՌԵՐԸ (ԹԹԵՆԻՆԵՐԸ) ՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով և հիմք ընդունելով նշված հասցեի բնակիչների դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Թույլատրել հատել Վայք համայնքի Վայք քաղաքի Շահումյան 22 հասցեի բազմաբնակարան շենքի հարակից տարածքում գտնվող թվով երկու թթենիները, քանի որ դրանք աղտոտում են տարածքը, խանգարում են պատշգամբներին և արմատները վնասում են բակի ասֆալտապատ հատվածը:

2.Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հարգելի Պարոն Մ. Մարկոսյան

Խնդրում ենք թույլ տալ Ճահուկյան 22 շենքի հարակից տարածքում գտնվող 2 թթենի ծառի հատման թույլտվությունը: Քանի որ, խանգարում է պատշգամբին և աղտոտում է ամբողջ տարածքը: Կից ներկայացնում ենք բոլոր բնակիչների համաձայնությունը:

Ա. Մովսիսյան [signature]

Սիրվարդ Սարգսյան [signature]

Էմմա Ղազարյան [signature]

Շնորհիկ Խաչատրյան [signature]

Սարգսյան Շուշանիկ [signature]

Աբրահամյան Էլզա [signature]

Մովսիսյան Գագիկ [signature]

Մանուկյան Ջեմմա [signature]

Бадалян [illegible] [signature]

Հեռ. 093759275

10.11.2023թ.